Արձանագրություն N 2

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/10 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27 նոյմբերի 2017 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գևորգյանը, անդամներ՝ Լևոն Հարությունյանը, Արթուր Մանուկյանը, Գագիկ Սարգսյանը, Արթուր Բոյաջյանը քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը և «Էկոմիքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Միեր Կիրակոսյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և ուսումնասիրման մասին

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/10 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Կարեն Գևորգյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը

Հ/Հ	Մասնակցի անվանումը «Էկոմիքս» ՍՊԸ ԱԱՀ վճարող Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ/	Նախահաշվային գին /ՀՀ դրամ /
1	-	100 000
2	20 766.67	24 000
3	27 450	45 000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով, որ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել միայն «Էկոմիքս» ՍՊԸ-ն և նրա կողմից առաջարկված գինը 2-րդ չափաբաժնի մասով գերազանցում է նախահաշվային գնին, ուստի հանձնաժողովը քննարկեց և որոշեց «Էկոմիքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Միեր Կիրակոսյանի հետ, որը ներկա էր գնահատող հանձնաժողովի բացման նիստին, վարել գնի նվազեցման բանակցություն: Բանակցության արդյունքում «Էկոմիքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը համաձայնվեց գինը նվազեցնել՝ սահմանելով 24 000 (քսանչորս հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

«Էկոմիքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- «Էկոմիքս» ՍՊԸ-ին ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Սույն ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ոչ մի հայտ չի ներկայացվել) համաձայն:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/10 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, ՀՀ ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Կարեն Գևորգյան
անդամներ	_____	Լևոն Հարությունյան
	_____	Արթուր Մանուկյան
	_____	Գագիկ Սարգսյան
	_____	Արթուր Բոյաջյան
քարտուղար	_____	Սպարտակ Հարությունյան